Հարություն վարդապետ Պզտիկյանի մասին ավելի շատ ոմանցի թերթերից գիտենք: Եվրոպաներում անուն ու ճանաչում գտած հայ նկարիչը Երևանում տարիներ առաջ 24-ժամյա մի ցուցահանդեսով էր ներկայացել... ոչ միայն. «18 նկար Ազնցի աղտեղ, հիմա տանում եմ՝ ոչ մի տեղ չկան»: Մոտ մեկ ամիս առաջ «Ազգը» ներկայացրեց նրան՝ իբրև Հալեռի Մելիքարյան վարժարանի տնտեսի: Հիմա կողմ կողմի նստած զրուցում ենք: Թնդն արդեն իսկ հեստրիր է՝ «վարիզյան դդրոցի նկարիչ» տելեսիկոյով, եւ հայ նկարիչ զայնեով»: 12 տարեկանից Ս. Դազարում է, սովել է «մարմնյան» հայ մշակույթով: Գեղանկարչության մեջ կնմահայը Պիկասոն է, բաբար-կիրակիները նրա արվեստանոցում շատերի հետ է խոսակցություն ծավալել՝ ժակ Պրեվերի, ժան Պոլ Սարտրի, Սիմոն Սինյորեի... 1963-ին հենց Պիկասոյի «միջնորդությամբ» է Փարիզում բացվել նրա ցուցահանդեսը, որի մասին ասում է. «Ես արհայական դասեն մտա Փարիզ»: 1967-ից Ֆրանսիայի գեղարվեստի ակադեմիայի դասվո մշտնջենավոր անդամ է, բայց կանխում է՝ «Գեսլերեսեի Հայաստանի ակադեմիայի դասվո անդամ բլլալ»: Նկարում է եզակի տելեսիկոյով՝ Մուրանո կղզու հայտնի բյուրեղների լազերով մանրացված փոշին վենետիկյան ջուրակի հետ խառնելով ստանում է հեղուկ խմանկար: 1967-ին Փարիզում լավագույն տելեսիկայի համար ոսկե մեդալ է ստացել: Մի մտահոգություն ունի՝ «Չեմ ուզում, որ վաղը իմ ժառանգությունը Ֆրանսիական կառավարությունը առնի»:

**– «Ազգում» տպագրված մի հոդվածում ասում եք՝ «Ճշմարիտ արվեստագետը նա է, ով հավատ ունի իր մեջ»:**

– Այդ փիլիսոփայական ըմբռնում է. արվեստագետը չէ անիկա, որ վրձին առնել գիտե, գծել գիտե, ներկել գիտե: Անիկա տեխնոլոգիա է: Արվեստը միայն գոյություն ունի մարդ արարածի մեջ: Հետեւակները արվեստ չունին, որովհետեւ հոգի են, կենդանիներն ալ արվեստ չունին, որովհետեւ մարմին են: Իրական արվեստը կա հոն, ուր կա հոգի եւ մարմին: Երբեմն շատ հասարակ ձեւով կգործածենք արվեստ, արվեստագետ բառերը:

Ստեղծագործություն մըն է արվեստը. ո՞վ կրնա ստեղծել. գերագույն էակը՝ Աստված: Աստված ոչինչեն կստեղծե բնությունը, տիեզերքը, մարդս, իսկ մենք՝ արվեստագետներս, Աստված չենք, սահմանափակ էակ ենք, այն է, որ մենք արդեն ստեղծված նյութը կառնենք եւ կկերպարանափոխենք ստեղծագործության: Հոն է, որ մենք Աստծո ստեղծագործության մաս կկազմենք:

**– Այսինքն՝ դուք բնությունից եկած նկարիչ եք:**

– Ես, իհարկե, տիեզերքեն եկող նկարիչ մըն եմ: Արվեստագետ ըսելով կնկատեմ արարած մը, որ գիտե բնության տարերեն ներդաշնակություն մը ստեղծել, ինչպես կըսեր Թոմաս Մաննը՝ «Գեղեցիկը ծեւերու ներդաշնակություն է»: Ի՞նչ բան է ներդաշնակությունը. «Ինչ որ մտի այլին հաճելի է» (Արիստոտել):

**– Ներդաշնակությունից խոսեցիք. ցուցասրահներում հիշ չեն նկարիչները, որ գույների հրավառություն, խրախճանք են սարքում:**

– Ընդհանրապես արվեստագետներու մեջ շաղասանիզմը ծնած է դյուրին կերպով հաճելի ըլլալու: Նկարիչներ՝ որոնք մեկ օրվա մեջ 10 դդրոցի պատկանող նկարներ կգծեն: Աստված արվեստագետներու շաղասաններն են: Փարիզեն մինչեւ Հալեռ նկատեցի, որ կան հայաստանյան նկարիչներ, որոնք մանրանկարչություն ըրած են ամբողջ կյանքերնին, բայց հանկարծ կուգան, Պիկասոյեն առաջ անցած տեխնոլոգի մը կներկայացնեն: Սեկ օրեն մյուսը այս փոփոխությունը, բնական է, ոչ մեկ հաստնություն ցույց կուտա, այլ դարգարեա՝ դատեհապատություն մըն է՝ հարմարիք, ծախեմ, շահիք:

**– Արեւաս Ավագյանը նախորդ օրն ասում էր, թե ինքը Հալեռում հանդիպել է նույն նկարչի՝ 10 նույն նատյուրմորտի: Յուրաքանչյուրը Վերնիսաժից նկարը գնելով, մտածել է, թե ինքը եզակի հարստություն ունի:**

– Ընդհանրապես սփյուռահայը արվեստի հանդեմ շատ ըմբռնում չունի: Արվեստը Հայաստանի մեջն էր, որ կծաղկեր, դդրոցներ կային, ակադեմիաներ կային: Սփյուռքեն որոշ դասակարգի մարդիկ էին, որ կուգային, ամենը չէին գար: Այս կարը, որ ստեղծած էին, բարեկամական կարեր էին, անձնական ծանոթություններ, այսինքն արվեստագետի հետ կուգային կերթային, հակառակ, որ իրենց ոտին տակը մեծ մեծ արվեստագետներ կծաղկեին Փարիզի մեջ, անոնց հետ ծանոթություն մը չունեին: Իրենց համար հայրենասիրական «ժեստ» մըն էր Հայաստան գալ եւ Գրիգոր Խանջյան մը գնել կամ ծանոթանալ, անոր հետ ընթրիքի մը նստիլ. այս ամենը սփյուռահայու խանգարված հոգեբանությունն էր: Արվեստը որոշ արվեստ չէր նկատեր: Հիմա, որ դռները բացվեցան, եւ Հայաստանեն սկսան արվեստագետները խուժել Բեյրութ, Հալեռ եւ այլն, արվեստագետ չէ, որ խուժեց, այլ վաճառականը խուժեց, եւ ճաշակիս համաձայն նատյուրմորտ մը, «պորտրետ» մը հինեց՝ դարգարեա փող ստանալու համար: Սենք անոր արվեստագետ անունը տվինք եւ հայ արվեստագետի անունը աղտոտեցինք: Մեր դպրոցության մեջ ունեցեր ենք եւ ունինք արժեքավոր՝ իսկապես միջազգային մակարդակի արվեստագետներ, կարելի չէ այս մարդիկը նսեմացնել այս վաճառականներուն դասեռով, որովհետեւ Սփյուռքի մեջ սխալ կարծիք մը կա, որ Հայաստանի բոլոր արվեստագետները այսօր վաճառական են: Ոչ, այդպես չէ:

**– «Պիկասոյից առաջ անցած» նկարիչներ շատ կան, որ շատերի համոզմամբ՝ ուղիղ գիծ գծել չգիտեն: Նկարչի համար դարտադի՞ր է անցնել ակադեմիզմի միջով:**

– Ավանգարդն ինքն իր մեջ դդրոց մը չէ: Օր մը Պիկասոյին մոտեցավ մի հրեա վարդապետ եւ ուզեց Իսրայելի օգնության համար մի նկար: Պիկասոն սովարարուդրի կտոր մը վերցուց եւ հակառակ դիմագիծ մը ըրավ, ստորագրեց, ծեռը տվավ: Մարդը նեղվեցավ ըսելով՝ վարդեր, ասիկա ինչ է: «Ասիկա 60 տարվա իմ դրդտումիս հետեւանքն է, մեկ օրվա գործ չէ»: Ը սել կուզեմ՝ Պիկասոն գիտակից էր, որ 60 տարի ճանապարհ կտրած էր, ոչ թե մերիններուն պես 6 ժամվան մեջ հանկարծ Պիկասո դարձած: Հասունության ըմբռնումի դակաս մը կա: Լավ գծելը դատճառ մը չէ արվեստագետ դառնալու, լավ դիզայներ կրնա ըլլալ, բայց ոչ արվեստագետ: Արվեստագետը չի կրնար հանկարծաբանել մեկ ժամվան մեջ: Պիտի ամբողջ ասիճանները կատարե. մտահոգ բռնելեն պիտի դասականի կատարը հասնի, որ կարենա այնտեղեն վերլուծում մը կատարել. դասականությունը գագաթն է: Ես ինչու համար վերացական արվեստի նվիրված եմ, որովհետեւ երբեմ պիտի չկարենամ ոչ Պիկասոյին, ոչ Տիցիանին, ոչ Լեոնարդոյին կատարելությունը ունենալ, բայց գոնեմ արիներու ընթացքին սերած, յուրացուցած եմ եւ հիմա կատարելուծեմ զանոնք եւ անոնց մեծությունը կտեսնեմ: Երբեմ պիտի յուզեմ մրցակցիլ անոնց հետ. անոնք այլեւս գագաթը հասած էին, մերինը վայրէջ մըն է, հետեւաբար նոր ճամփա մը պիտի որոնենք՝ անոնց ուղիով: Վեր պիտի ելլենք, կամաց կամաց պիտի իջնենք, տեսնենք, ուր հասեր ենք:

**– Աբստրակտ դդրոցի հետեւորդ լինել նշանակում է հավաածը համել ու զգայականը խել կտավին:**

– Աբստրակտ արվեստ չկա: Պիկասոյին հարց էի տալիս՝ երբ սա կնոջ դիմագիծը կգծես, երկու քիթ կգծես՝ մեկը՝ կողմնակի, մեկը՝ ուղղակի, երկու աչք՝ ուղիղ նայող, մեկը՝ կողմնակի նայող: Կըսեր՝ որովհետեւ շարժումը կուզեմ տալ: Ուրեմն մեծ գաղափար մը կար, ոչ թե ծաղրանք մըն էր, ինչպես կկարծեն տգեղ մը: Այսօրվա ուսում չունեցող աբստրակտ նկարիչները կկարծեն հանկարծաբանության մեջ է արվեստը: Ինձի համար դիմագիծը խոշորացույցով դիտված ֆիգուրային արվեստ մըն է, մարդիկ աբստրակտ կկարծեն, բայց ես այդ մասնիկը կը միայն կառնեմ, որովհետեւ ես կարողությունը չունիմ մեծ արվեստագետի մը ամբողջությունը առնելու, այդ մասնիկը կառնեմ, կմեծցնեմ: Հետեւաբար, ինքն իր մեջ աբստրակտ արվեստ չկա: Ամեն արվեստ ֆիգուրային է, բայց՝ տեսնված ո՞ր անկյունեն... Սովով, դատրաստված մտավորական մը կամ անձ մը կրնա ամեն արվեստագետի խորը թափանցել: Արվեստի ճնանդասները դեսք է շատ զարգացած անձեր ըլլան: Հասարակ մահկանացուն երբեմն սխալ կմեկնաբանե, շատ դժվար ճյուղ մըն է արվեստը ըմբռնել եւ զայն ներկայացնելը:

**– Արվեստի մեկնաբանները շատ բարձր կարծիք են հայտնում Ձեր նկարչության մասին:**

– Շատ անգամ անակնկալի կուգայի՝ տեսնելով արվեստի մեկնաբանին հզորությունը: Ֆրանսայի ցուցահանդեսներեն հետո կին մը, որ չէր ճանչնար զիս, գրեր էր՝ «Այս նկարիչը դեսք է հոգեւորական ըլլա»: Գացի, գտա այդ կինը: Մի ռուս կին էր, Փարիզում հաստատված: Ըսի՝ ինչդես գիտցաք: «Ես մտա դատկերասրահը, ներշնչվեցա եւ գրեցի, բայց դուք խոր միստիկ եք», ըսավ: Ըսի «որեւիցե մեկը միստիցիզմ չի տեսներ», ըսավ «աչք չունին»: Ես վախցա, որ իմ ներաբխարիս, իմ զգացումներս կարող են բարձր դաշտոն ունի արվեստի մեկնաբանի մը եւ որեւան խորը իմացական ըմբռնողություն:

**– Քննադատները Ձեր նկարչության՝ խիստ ընդգծված բանաստեղծականության մասին են խոսում նաեւ:**

– Իմ արվեստս Փարիզում անվանեցին՝ ներաբական վերացականություն մը: Երկար տարիներ միշ մը ամեն ինչ գծած եմ՝ մանրանկարչությունեն սկսյալ վանքի աշակերտական բերբեր ծեւավորած եմ, բայց ինքզինքս գտա այս վերացական ներաբգության մեջ եւ կարծեմ ամենալավ ձեւով կարտահայտեմ ամբողջ աղոթքը, որ կբարձրանա եւ կտղավորվի, որովհետեւ գոր ծածանս նյութերն ալ տղավորիչ են: Կարծես թե հաջողած եմ արդի մարդոց ուրեն մեջ տղավորվիլ:

**– Ժամանակը խիստ ներկա է Ձեր նկարչության մեջ: Ինչո՞ւմ:**

– Գիծերու մեջ կա, գույներու մեջ կա:

**– Պիկասոն ասում էր՝ ինքը չի փնտրում, ուղղակի գտնում է:**

– Ես էլ չեմ փնտրում, ուղղակի ադրում եմ: Մեր ամենօրյա կյանքի գծերը՝ լույսի թելերը, ծառերը, ամենը մեզ տղավորում են՝ առանց հասկցնելու: Ես ադրելով կարդիմ կյանքս: Դիմացս անցնող անձը կդիտեմ, մայրին վրայի քարեն շարվածքը կդիտեմ... Լուսանկարի մեքենա մըն է իմ հոգիս, եւ ամեն ինչ նկարներուս մեջ երեւան կելլե: Այս գույները մենք ունինք՝ գիշերային գույն մը, ցերեկային գույն մը, արեւուն գույն մը, վերջալույսի, արշալույսի, այս ամենը կմտնեն եւ կվերածվին նկարի: Ես անոր համար ժամանակակից նկարիչ մըն եմ՝ ոչ ադագայի եւ ոչ ալ անցյալի: Ես այսօրվան, այս ժամու նկարիչ մըն եմ, որ կարդիմ իմ զգացումներս իմ ներկա աշխարհես: Վաղը երբ մեկը ուզե վերլուծել, կըսե՝ 1995-ի ադրիլին այս նկարը գծված է, եւ հոն գեղեցիկ արեւ մը կար կամ վարդագույն լուսին մը կար...

*Հարություն Պզտիկյանի հետ մեր զրույցը հետաքրքիր ու երկար, հնարավոր չեղավ թերթի մեկ էջում սեղմել: Հոկտեմբերին Թեհրանի մշակութային միության հրավերով Երեւանում կբացվի նրա ցուցահանդեսը: Մեր հաջորդ զրույցը ցուցահանդեսի ընթացքում:*

ԼՈՒԻԶԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԵՐԳԱՐԿԵՍ

## Արման Էլբրտը միջազգային մրցույթի դափնեկիր

ՄՈՍԿՎԱ, 21 ՕԳՈՍՏՈՍ. ՓԱՍՏ: Մոսկվայում ավարտվեց «Հայաբա-Մոսկվա-տրանզիտ-95» երիտասարդ երգիչների 10-դ միջազգային մրցույթը: Մոսկվա-Սանկտ-Պետերբուրգ-Մոսկվա-Երեւան. այս հերթական կանոնությամբ դասավորվեցին այն քաղաքները, որոնց ներկայացուցիչներն արժանացան հասն կատարողների մրցույթում շնորհված չորս մրցանակներին: Գրան դրին շահեց մոսկվացի Օքսանա Պավլովսկայան, առաջին մրցանակը դետերբուրգյան «Հայ վդիսյոն» դուետը, երկրդ մրցանակը մոսկվացի Նոյանը, իսկ երրդը Հայաստանի երգի դետական թատրոնի մենակատար Արման Էլբրտը:

Դրդես միջազգային մրցույթի դափնեկիր, հայ երգիչ արժանացավ դրամական դարգեւի եւ միջերկրածովյան ու հարավամերիկյան երկրներով ծովային շրջագայություն անցկացնելու ուղեգրի:

Ավելացնենք, որ «Ազգի» առաջի կա համարում Արմանի մասին ավելի մանրամասն:

ՀԱՄԱՌՈՏ

## Օպերային թատրոնը՝ Մոսկվայում

ԵՐԵՎԱՆ, 21 ՕԳՈՍՏՈՍ, ՍՆԱՐՔ: Սեպտեմբերի 15-20-ը Մոսկվայում կանցկացվեն Ալ. Սպենդիարյան օպերային դետական ակադեմիական թատրոնի հյուրախաղերը. Սնարհի բոլշոյի հայտնեց թատրոնի գեղարվեստական դեկավար եւ գլխավոր ռեժիսոր Տիգրան Լեւոնյանը: Ներկայումս թատրոնում անցկացվում են Վերդիի «Օթելլո» օպերայի փորձերը՝ Տ. Լեւոնյանի բեմադրությամբ: Սեպտեմբերի 6-7-ը Երեւանում նախատեսված է ներկայացման հանդիսային դիտում: Իսկ դրեմիերան տեղի կունենա Ռուսաստանի մայրաքաղաքում՝ սեպտեմբերի 17-ին: Հայաստանի արտիստները մոսկովյան հանդիսատեսին կներկայացնեն նաեւ Դոնիցետտիի «Դոքիկոս» եւ Տիգրանյանի «Անուշ» օպերաները: Սեպտեմբերի 20-ին Միությունների տան սյունազարդ դահլիճում տեղի կունենա թատրոնի եզրափակիչ ելույթը: Աղագայում, Տ. Լեւոնյանի խոսքերով, նախատեսվում է բեմադրել Մինկուսի «Դոն Կիխոտ» բալետը՝ Վիլեն Գալստյանի դեկավարությամբ:

## Բոստոնի «Սայաթ Նովան» Երեւանում

Օգոստոսի 23-ին Երեւանի Հակոբ Պարոնյան երաժշտական կոմեդիայի թատրոնի շենքում կկայանա Բոստոնի «Սայաթ Նովա» հայկական ժողովրդական պարախմբի հայաստանյան հյուրախաղերի եզրափակիչ համերգը: Պարախումբը Հայաստանում է գտնվում օգոստոսի 13-ից: Այս ընթացքում այն համերգներով հանդես է եկել էջմիածնում, Թալինում, Արտաշատում, Աշտարակի եւ Նաիրիի շրջանի գյուղերում:

ԼՏ

## Մայր տաճարի մանրակերտը՝ Ավստրիայի «Մինիմունդուս» ցուցահանդեսում

Աբենի «Ազատ օր» թերթը հաղորդում է, որ Ավստրիայի Բլաֆենֆորդ քաղաքի «Մինիմունդուս» («Փոքրիկ աշխարհ») կոչվող ցուցահանդեսում վերջերս կայացել է Ս. Էջմիածնի Մայր տաճարի մանրակերտի բացումը: Մանրակերտը 18 ամսում դատրաստել է ավստրիացի արվեստագետ Մարիաու Ժերինան: Նախագիծը եւ տուֆ քարը Բլաֆենֆորդ են բերվել Հայաստանից: Հանդիսությանը ներկա են եղել Ավստրիայում Հայաստանի դեսպան Արման Նավասարդյանը, դիվանագետներ եւ հասարակության ներկայացուցիչներ: Մինիմունդուսում ցուցադրված են աշխարհի նշանավոր շինությունների մանրակերտերը: 1958թ.-ից ի վեր այստեղ ցուցադրվում են 160 մանրակերտեր, որոնց չափերը իրենց ունեցած իրական մեծությունից փոքրացված են 25 անգամ:

ԼՏ

ԱՆՇՈՒՇԱԲԵՐ

## Տնտեսությունը եւ մանկական ստեղծագործությունը

ԵՐԵՎԱՆ, 21 ՕԳՈՍՏՈՍ, ՄԱՄԲԻ: Հայաստանի տնտեսական դժվարությունները անդրադարձել են նաեւ մեր երեխաների ստեղծագործական խանդավառության վրա. Սնարհի բոլշոյի հետ զրուցելիս գանգատվեց Երեւանի մանկական ստեղծագործության կենտրոնի տնօրեն Լաուրա Ավետիսյանը:

Նրա խոսքերով, 1989-ի համեմատությամբ եռակի կրճատվել է մայրաքաղաքի այդ հին մշակութային կենտրոն հաճախող երեխաների թիվը: Հիմնական դատճառն այն է, որ ծնողները եւ հենց կենտրոնը չեն կարողանում երեխաներին աղահովել դարադմանների համար անհրաժեշտ գույքով: Ֆինանսների դակասի հետեւանքով կենտրոնի աշխատակիցները կրճատվել են գրեթե 40 տոկոսով: Բացի դրանից, վերջերս կենտրոնը դժվարություններ ունի հարկաբաժնի հարցում: 1988-1990 թթ. կենտրոնի դեկավարությունը իր բյուջեն միջոցներով կառուցում էր նախկին քաղաքային դիոներ դարպասի շենքի կցակառույց: 1990 թ. ֆինանսների դակասը հանգեցրեց շինարարության դադարեցման: Իսկ 1994 թ. դեկտեմբերին Երեւանի քաղխորհրդի որոշմամբ կցակառույցը 30 տարով վարձակալման տրվեց Ա. Ճաղյան հասարակաց ընկերությանը, որը եւ ավարտում է շինարարությունը սեփական միջոցներով: Կենտրոնի տնօրենության տակ մնացած տարածքներ հաճախող երեխաների ներկայիս թվի դայմաններում անբավարար են: Միակ ելքը հասարակության դեկավարության հետ բնդհանուր լեզու գտնելն է, որդեսզի հասանելի օգտագործվեն հարկաբաժիններ, ինչը, ի դեդ, նախատեսված է Երեւանի վերանիլայ որոշմամբ:

SHARM-Ը
ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է
ԱՆԿՐԿՆԵԼԻ ՍԵՐԳԵՅ ԿՈՒԻԼՈՎԻՆ
ԵՎ
ԵՐԵՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԿԲՀ ԹԻՄԸ ԻՐ ՆՈՐ ԾՐԱԳՐՈՎ
ՇՏԱՊԵՏԵՔ, ԱՍՍՈՒՅԻՆ ՀԱՍԵՐԳԱՇՐՋԱՆ ԱԿԱՐՏՎՈՒՄ Է:
ՍԿԻԶԲԸ՝ ՕԳՈՍՏՈՍԻ 28-ԻՆ ԵՎ 29-ԻՆ, ԺԱՄԸ 18-ԻՆ:
ՏՈՍՍԵՐԸ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՍԱՐՋԱՇԱՍԵՐԳԱՅԻՆ
ՀԱՍԱԼԻՐԻ, ՕՊԵՐԱՅԻ, ՖԻԼՀԱՐՄՈՆԻԱՅԻ
ՏՈՍՍԱՐԿՂԵՐՈՒՄ ԵՎ ԱՅԼՈՒՐ:
ՀԵՌԱԽՈՍՆԵՐ՝ 56.55.57, 52.79.71

digitised by A.R.A.R.@

# Մարզական

ՈՒԵՖԱ-Ի ԳԱՎԱԹ

## «Շիրակն» այսօր հրավիրում է «Հրազդան»

ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ.

Այսօր «Հրազդան» կենտրոնական մարզադաշտում Գյումրիի «Շիրակը» ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկության նախնական փուլի դասախաղ խաղում կիսորընկալի Լեհաստանի Լուբին քաղաքի «Զագլեբիե» թիմին: Հիշեցնենք, որ առաջին հանդիպումը Լեհաստանում ավարտվել է ոչ ոքի 0-0, եւ շիրակցիները լավ հեռանկարներ են ունենում հաղթահարելու առաջին արգելքը եւ դուրս գալու հաջող վիճակ: Ինչպես տեղեկացրեց «Շիրակ» թիմի ղեկ Սամվել Մանուկյանը, շիրակցիները կազմ ու դասդասս են դասախաղանաստ խաղին եւ ամեն ինչ կանեն ուրախացնելու իրենց երկրպագուներին: Շիրակցիներ ֆուտբոլասերներին հրավիրում են «Հրազդան» մարզադաշտ: Նրանց ներկայությունը լրացուցիչ լիցք կհաղորդի մեր ֆուտբոլիստներին: Սպասվում է, որ շուրջ 3000 ֆուտբոլասերներ կժամանի Գյումրիից: Արդեն դասվիրված է 60 ավտոբուս: Իր վնասվածքն ապաքինել է թիմի առանցքային խաղացողներից մեկը՝ Հարություն Վարդանյանը, որը չէր մասնակցել Լեհաստանում տեղի ունեցած հանդիպմանը: Խաղին դասդասս է նաեւ Գագիկ Մարգարյանը, որը նույնպես վնասվածք ուներ: Ցավոք, մրցասպարեզ դուրս չի գա Հակոբ Արտյանը, որը չնայած Լեհաստանում հիանալի խաղաց, սակայն հեռացվեց դաշտից: Հյուրերը երեկ ժամանեցին Երեւան եւ երեկոյան ժամը 7-ին ծանոթացան «Հրազդան» մարզադաշտին ու ստորագրեցին անցկացրին այնտեղ: Սպասվում է բացառիկ լարված եւ անգիջում մրցակցություն: Ի դեպ, տեղեկացնենք, որ ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկության մրցակարգում նոր փոփոխություն է կատարվել: Եթե դասդասս հանդիպումն էլ ավարտվի նույն արդյունքով՝ 0-0, ապա կնշանակվի 30 րոպե լրացուցիչ ժամանակ, եւ եթե այդ դեղքում էլ հաղթող չորոշվի, ապա II մետաղոց հարվածներ չեն իրացվի, այլ առավելությունը կտրվի հյուրերին, որոնք վասատրեն դասդասս խաղում 30 րոպե ավելի են փորձությանն ենթարկվում մրցակցի դաշտում: Դա նշանակում է, որ շիրակցիներին միայն ու միայն հաղթանակ է դեսք, քանի որ արդյունավետ ոչ ոքին էլ հյուրերի օգտին կլինի:

Լուբլինը փոքրիկ քաղաք է, որն ունի 90 հազար բնակչություն: Սակայն մարզադաշտը տեղավորում է 40 հազար հանդիսական:

«Զագլեբիեն» հիմնադրվել է 1946 թվականին: 1985 թվականից հանդես է գալիս Լեհաստանի առաջնության առաջին խմբում: Դա Լեհաստանի բարձրագույն մրցաշարն է: 1988-1989 թթ մրցաշրջանում թիմը հրաժեշտ է տվել ուժեղագույնների խմբին, բայց մեկ տարի անց վերադարձել առաջին խումբ:

Այսօր հայտավորված են.

| «Զագլեբիե» | | |
|---|---|---|
| Անժեյ Շչեպկովսկի | 1971 | 178 |
| Վոյցեխ Գորսկի | 1972 | 176 |
| Զբիգնեւ Չայկովսկի | 1972 | 171 |
| Քշիշտով Նալեթկա | 1967 | 178 |
| Գժեգոժ Շելիգա | 1968 | 188 |
| Յարոսլավ Կշեշանովսկի | 1975 | 175 |
| Ստեֆան Մախայ | 1964 | 181 |
| Յացեկ Բանաշինսկի | 1975 | 184 |
| Վադիմ Ռոգովսկոյ | 1963 | 187 |
| Միրոսլավ Դրեշեր | 1965 | 186 |
| Պյոտր Պշերիվաշ | 1972 | 176 |
| Ռոբերտ Բուբնովիչ | 1971 | 188 |
| Սլավոմիր Մայակ | 1969 | 185 |
| Ռադոսլավ Կալուժնի | 1974 | 191 |
| Դարիուշ Լեւանդովսկի | 1965 | 180 |
| Ռադոսլավ Յաշինսկի | 1971 | 177 |

| «Շիրակ» | | |
|---|---|---|
| Ռայմոնդ Զադոյան | 1971 | 179 |
| Արթուր Հովհաննիսյան | 1968 | 180 |
| Սարգիս Կարապետյան | 1963 | 179 |
| Արտակ Ադամյան | 1974 | 175 |
| Հարություն Վարդանյան | 1970 | 181 |
| Թելիխ Խոջոյան | 1975 | 179 |
| Գագիկ Մարգարյան | 1969 | 176 |
| Հովհաննես Թահմազյան | 1970 | 172 |
| Արթուր Պետրոսյան | 1971 | 178 |
| Արամ Թումասյան | 1973 | 176 |
| Կոլյա Եփրանոսյան | 1975 | 181 |
| Արարատ Հարությունյան | 1975 | 177 |
| Արայիկ Ադամյան | 1973 | 182 |
| Գրիգոր Գրիգորյան | 1971 | 178 |
| Արտյոմ Բեռնեցյան | 1975 | 179 |
| Սամվել Նիկոլյան | 1964 | 170 |
| Հրայիկ Ավետիսյան | 1965 | 172 |

«Զագլեբիեն» Լեհաստանի 1991 թվականի չեմպիոնն է: Թիմը երրորդ անգամ է մասնակցում եվրոպական ակումբային մրցաշարերին: 1990-1991 թթ մրցաշրջանում «Զագլեբիեն» հանդես է եկել

Արթուր Պետրոսյանը

ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկությունում եւ առաջին փուլում մրցելով Լեհաստանի «Բոլոնիայի» հետ, երկու հանդիպումներում գիջել է միեւնույն 0-1 հաշվով: 1991-1992 թթ. Լուբլինի թիմը կրկին է ունեցել չեմպիոնների գավաթի խաղարկությունում: Նրա մրցակիցն էր Դանիայի «Բրոնդբյու» թիմը: Չնայած սեփական հարկի տակ «Զագլեբիեն» հաղթել է 2-1 հաշվով, սակայն դասդասս խաղում գիջել է 0-3 հաշվով:

«Զագլեբիեի» կազմում արդեն 4-րդ տարին է, ինչ հանդես է գալիս Մոսկվայի «Տորպեդոյի» նախկին խաղացող Վադիմ Ռոգովսկոյը, որին հայ ֆուտբոլասերները լավ են ճանաչում: Լուբլինում Ռոգովսկոյը դուրս գալով փոխարինման, իրեն գերազանց է դրսեւորել «Շիրակի» հետ խաղում: Նա կատարում է ազաս դաշտանի դարտականություն: «Զագլեբիեի» դեմ Յանոշ Կուբոտը ասաց, որ իրենք շատ կազգեն տեսնել «Շիրակի» եւ ՀՀ հավաքականի կիսաաշտպան Արթուր Պետրոսյանին, որը հիանալի է խաղացել Լուբլինում:

Այն հարցին, «Զագլեբիենն» է ուժե՞դ, թե՞ «Արարատի» մրցակից Կատովիցեի թիմը, «Զագլեբիեի» դեսը վստահորեն ասաց, որ խենց թիմն է ուժեղ: Համենայնդեպս, նոր սկսված Լեհաստանի հերթական առաջնությունում «Զագլեբիենն» երեք տարից հետո 4 միավորով ընթանում է 8-րդ տեղում («Լեգիա»-«Զագլեբիե» 1-0, «Զագլեբիե»-«Ստալ» 5-1, «Շլյոնսկ»-«Զագլեբիե» 1-1), իսկ ԳԿՍ-ը վասակել է ընդամենը 1 միավոր եւ վերջին տեղերում է (ԳԿՍ-«Հուսնիկ» 1-2, «Պոգոն»-ԳԿՍ 1-0, ԼԿՍ-ԳԿՍ 1-1):

«Զագլեբիեի» նյութերները Լեհաստանի առաջնություններում

| | | | |
|---|---|---|---|
| 1984-85 թթ. | 2-րդ լիգա | 1-ին տեղ |
| 1985-86 թթ. | 1-ին լիգա | 12-րդ տեղ |
| 1986-87 թթ. | 1-ին լիգա | 8-րդ տեղ |
| 1987-88 թթ. | 1-ին լիգա | 11-րդ տեղ |
| 1988-89 թթ. | 2-րդ լիգա | 1-ին տեղ |
| 1989-90 թթ. | 1-ին լիգա | 2-րդ տեղ |
| 1990-91 թթ. | 1-ին լիգա | 1-ին տեղ |
| 1991-92 թթ. | 1-ին լիգա | 11-րդ տեղ |
| 1992-93 թթ. | 1-ին լիգա | 9-րդ տեղ |
| 1993-94 թթ. | 1-ին լիգա | 13-րդ տեղ |
| 1994-95 թթ. | 1-ին լիգա | 4-րդ տեղ |

Ավելացնենք, որ այսօրվա խաղը վարելու է ուկրաինական մրցավարական բրիգադը:

Ինչպես հայտնի է, Գավաթակիրների գավաթի խաղարկության նախնական փուլի դասախաղ խաղում Երեւանի «Արարատն» իր հերթին երկու օր հետո «Հրազդան» մարզադաշտում հյուրընկալելու է լեհական մեկ այլ թիմի Կատովիցեի ԳԿՍ-ին: Ինչպես տեղեկացանք «Արարատ» ակումբից, ի տարբերություն «Շիրակի» հաճարաղեսության գավաթակիրը խաղացողների առումով խնդիրներ ունի: Թիմի առանցքային խաղացողներից դարդասատան Հարություն Աբրահամյանի եւ հարձակվող Արմեն Շահգելդյանի մասնակցությունը կասկածի տակ է, քանի որ երկուսն էլ վնասվածքներ ունեն: Արարատցիներն էլ ամենայն դաստասխանատվությամբ են դասրաստվում դասախաղ խաղին, չնայած առաջին անգամ գիջել են 0-2 հաշվով եւ հայտնվել դժվարին կացության մեջ:

## Քարավանը շարժվում է առաջ

Եվրոդայի առաջնության Հայաստան-Դանիա խաղի հետ կապված կարճաստեւ ընդմիջումից հետո վերսկսվեց հաճարաղեսության բարձրագույն խմբի առաջնությունը: Տեղի ունեցավ 4-րդ տուր: Խաղացանկով նախատեսված 6 հանդիպումներից կայացան 5-ը: Հականալի դասճառներով հետաձգվել է «Շիրակ»-«Երեւան» հանդիպումը:

Սիա մյուս խաղերում արձանագրված արդյունքներ.

| | |
|---|---|
| «Ղարաբաղ»-«Ազնավուր» | 2-1 |
| «Ցեմենտ»-«Արագած» | 6-1 |
| «Վան»-«Արարատ» | 0-5 |
| «Կոտայք»-ՀՄՄ | 4-2 |
| «Փյունիկ»-«Զանգեզուր» | 5-0 |

Իր վստահ կրյուքներն է շարունակում «Փյունիկը», որն անընդմեջ 4-րդ հաղթանակը տարավ: «Փյունիկը» միանձնյա գլխավորում է մրցաշարային աղյուսակը: «Վան»-«Արարատ» խաղում 3 գոլի հեղինակ դարձավ ՀՀ երիտասարդական հավաքականի անդամ Արա Ոսկանյանը: Մեկական անգամ աչքի ընկան Լեւոն Ստեփանյանը եւ Հակոբ Տեր-Պետրոսյանը: «Արարատում» բացակայում էին Հարություն Աբրահամյանը եւ Արմեն Շահգելդյանը:

Գնալով ավելի հուսալի խաղ է ցուցադրում Աբովյանի «Կոտայքը»: Հերթական տուրում աբովյանցիները 4-0 հաշվով խաղը շահում էին ՀՄՄ-ից, սակայն հետո հնարավորություն տվեցին մրցակցին երկու անգամ գրավել դարդասը:

Առաջնության աղյուսակը օգոստոսի 22-ի դրությամբ

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Փյունիկ | 4 | 4 | 0 | 0 | 18-4 | 12 |
| 2. Ցեմենտ | 4 | 3 | 0 | 1 | 13-5 | 9 |
| 3. Կոտայք | 4 | 3 | 0 | 1 | 11-8 | 9 |
| 4. Երեւան | 3 | 2 | 1 | 0 | 8-1 | 7 |
| 5. Արարատ | 3 | 2 | 0 | 1 | 14-3 | 6 |
| 6. ՀՄՄ | 3 | 1 | 1 | 1 | 7-8 | 4 |
| 7. Զանգեզուր | 4 | 1 | 1 | 2 | 6-10 | 4 |
| 8. Արագած | 4 | 1 | 1 | 2 | 6-16 | 4 |
| 9. Ղարաբաղ | 4 | 1 | 0 | 3 | 3-8 | 3 |
| 10. Շիրակ | 1 | 0 | 1 | 0 | 2-2 | 1 |
| 11. Վան | 4 | 0 | 1 | 3 | 3-14 | 1 |
| 12. Ազնավուր | 4 | 0 | 0 | 4 | 5-17 | 0 |

ՃԱՊՈՆԻԱ

## Ունիվերսիադային կմասնակցեն նաեւ հայ մարզիկները

ՀՀ սպորտվարչությունից «Նոյյան տարան» գործակալության բդրակցին տեղեկացրին, որ օգոստոսի 24-ից սեպտեմբերի 2-ը Ճապոնիայի Յոկոհամա քաղաքում անցկացվելիք համաշխարհային ուսանողական մարզախաղերին Հայաստանի մարզիկները հանդես կգան 3 մարզաձևում: Միջազգային այդ խոշոր ստուգատեսին կմասնակցեն հայ սուսերամարտիկները, որոնք ըստ մարզաձևի դեսական մարզիչ Ռոմիկ Մահակյանի, կդայքարեն ճկասուսեր եւ խոցասուսեր վարժություններում, ինչպես նաեւ հանդես կգան բիմային դայքարում: Ֆուկուոկայում աշխարհի ուժեղագույն երիտասարդ մարզիկների հետ կդայքարեն միջազգային վարդես, հեռացատկող եւ նռացատկող Արմեն Մարտիրոսյանը եւ հեռացատկող Շիրակ Պողոսյանը: Համաշխարհային ուսանողական մարզական խաղերն ուժերի ստուգատես կդառնան նաեւ ձյուդո-ըմբշամարտի հայ մարզիկ-մարզուհիների համար: ԼՏ

ԽՈՇԱՆԿԱՐ

## Մեկնարկեց շախմատի կանանց հանրադետական առաջնությունը

Օգոստոսի 21-ին Երեւանի շախմատիստի կենտրոնական տանը մեկնարկեց շախմատի կանանց հանրադետական առաջնությունը, որը կազմակերդել են ՀՀ սդորտվարչությունը եւ մարզածեւի հանրադետական ֆեդերացիան: Առաջնությանը մասնակցում են հանրադետության 14 ուժեղագույն շախմատիստուհիներ՝ այդ բվում միջազգային վարդես Լիլիթ Մկրտչյանը, ՖԻԴԵ-ի վարդես Արուսյակ Գրիգորյանը, ազգային վարդեսներ Էռնա Խալաֆյանը, Գոհար Հրդաբյանը եւ ուրիշներ: Շախմատի հանրադետական ֆեդերացիայից «Նոյյան տարան» գործակալության բդրակցին տեղեկացրին, որ առաջատար շախմատիստուհի Էլինա Դանիելյանը հանրադետական առաջնությանը չի մասնակցում: ԼՏ

## «Արաբկիրն» ու ԲԿՄԱ-ն առաջատար

Հանրադետական մրցաշարն են սկսել ֆուտբոլի առաջին խմբի 12 թիմերը, որոնք դայքար են մղում բարձրագույն խմբի երկու ուղեգրի համար: Երկու տուրից հետո 100 տոկոսանոց արդյունք ունեն Երեւանի «Արաբկիրն» ու ԲԿՄԱ-ն: Բանակային ֆուտբոլիստները նախ 5-0 հաշվով առավելության հասան Արտաշատի «Դվինի» նկատմամբ, ապա դարտության մատնեցին Գյումրիի «Կումայրի» թիմին (2-0): «Արաբկիրը» հաղթել է Երեւանի «Նաիրիս» (6-3) եւ Վանաձորի «Աստղ» (4-1) թիմերին: ԼՏ

## 25 միլիոն դոլլար մեկ մարտի համար

Երեք տարվա բանտարկությունից հետո կրկին օրենք է վերադարձել դրոֆեսիոնալ բոքսամարտի գերծանր քաշի աշխարհի նախկին չեմդիոն Մայք Թայսոնը: Նրա վերադարձը հսկայական հետաքրքրություն է առաջացրել մարզասերների շրջանում եւ դրանից շահում են ոչ միայն գործարար մարդիկ, այլեւ ինքը՝ Թայսոնը: Առաջին մարտը Թայսոնն անցկացրեց Մակնիլիի հետ եւ մեկուկես ռոդեում առավելության հասավ մրցակցի հանդեդ: Թայսոնը ստացավ 25 մլն դոլլար: Չնայած դարտությանը՝ Մակնիլիին բաժին է հասել 540 հազար դոլլար:

## Արա Գեվորգյանը՝ աշխարհի հավաքականում

Ազաս ոճի ըմբշամարտի Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Հրանտ Եռոխանը «Նոյյան տարան» գործակալության բդրակցին հաղորդել է, որ Աստանայում կայացած աշխարհի առաջնության չեմդիոն Արա Գեւորգյանը (68 կգ) սեդտեմբերի 27-ին կմասնակցի աշխարհի հավաքականի եւ Ռուսաստանի ազգային հավաքականի միջեւ կայանալիք մրցավեճին: Հայ մարզիկը հանդես կգա աշխարհի հավաքականի կազմում: ԼՏ

ՆՈՐ ՄԱՐԶԱՁԵՎԵՐ

## Օդային սերֆինգ

Մինչեւ վերջերս մարզասերները ականատես էին լինում ջրերի կամ ձյան վրա սերֆինգ մարզածեւին: Գնալով այս մարզաձեւի տարատեսակներն շատանում են: Արդեն ի հայտ է եկել սերֆինգի օդային տարատեսակը: Այսպես, նկարում դատկերված շվեյցարացի հանդուգն մարզիկը 3000 մետր բարձրության վրա օդանավից դասկելով սերֆինգի շորիով վարում է դասդանել հավասարակշռությունը, շրջադասված լինելով ձյունածածկ լեռներով: Մարզիկը սերֆինգի շորիով տարբեր գեղեցիկ շարժումներ կատարելով մոտավորապես 1500 մետր վայրէջքից հետո բացում է դարաշյուտը եւ անվնաս իջնում գետնին: Գ. Ա.

ՀՈԳՍԵՐ

## Գյումրիի մարզադաշտը՝ 8 ամսում

Արդեն մեկ ամիս է, ինչ Գյումրիում «Շիրակին» շինարարական կազմակերդությունը իրականացնում է քաղաքային մարզադաշտի վերակառուցման աշխատանքները: Շինարարության դատվիրատուն «Համաշխարհային բանկն» է: Շինարարական կազմակերդությանը տրված է 8 ամիս ժամանակ: Հաշվի առնելով Գյումրիին առանձնահատուկ ցուրտ ձմեռը, այդ ամիսները ժամկետի մեջ չեն մտնում: Դայմանագրվածության համաձայն, յուրաքանչյուր ուշացած մեկ օրվա դիմաց շինարարական կազմակերդությունը կստանվի 200 ամերիկյան դոլլարով: Գյումրիի սդորտկոմիտեի նախագահ Վարդեւան Գեւորգյանի բնորոշմամբ, մարզադաշտի վերականգնման աշխատանքներից հետո, այն կհամադասխանի միջազգային ստանդարտներին եւ 1996թ.-ից սկսած Գյումրիի «Շիրակ» ֆուտբոլային թիմն իր միջազգային հանդիդումները կանցկացնի ոչ թե Երեւանի «Հրազդան» մարզադաշտում, այլ սեփական հարկի տակ: ԼՏ

digitised by A.R.A.R.@

## Երեւանի «Հրաչյա Աճառյան» հանրակրթական դպրոցը

կայարում է 1995-96 ուսումնական տարվա ընդունելություն հետեւյալ ֆակուլտետներում

◇ Միջազգային հարաբերություններ եւ բարգմանչություն ◇ Միջազգային իրավունք ◇ Միջազգային տնտեսական հարաբերություններ ◇ Միջազգային ինֆորմացիա եւ բարգմանչություն ◇ Պատմություն լեզու, գրականություն եւ բարգմանչություն ◇ Իրավագիտություն ◇ Մենեջմենթ եւ մարկետինգ ◇ Բանասիրական ◇ Պատմություն եւ աշխատանքագրություն ◇ Մանկավարժություն եւ տարրական կրթության մեթոդիկա ◇ Նախադպրոցական մանկավարժություն եւ հոգեբանություն ◇ Քիմիա եւ կենսաբանություն ◇ Դեֆեկտոլոգիա ◇ Կիրառական մաթեմատիկա:

Ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով:

Ուսման տեւողությունը մանկավարժության եւ տարրական կրթության մեթոդիկայի, նախադպրոցական մանկավարժության եւ հոգեբանության ու դեֆեկտոլոգիայի ֆակուլտետներում չորս տարի է, մյուս ֆակուլտետներում հինգ տարի: Համալսարանը կնվիրած դպրոցականների հիման վրա կարող է գեղագանձիկ ուսանողներին եւ նոստալգային աղջիկներին ուղարկել տվարելու, իսկ երիտասարդ դասախոսներին վերադասավանդման Միլանի, Փարիզի, Մասկվայի, Արենի, Սաղոնիկի, Թեհրանի եւ Վառնայի համալսարաններ, Մոսկվայի միջազգային հարաբերությունների ինստիտուտ:

Դիմորդները պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը. միջնակարգ կրթության վկայական, միջնակարգ մասնագիտական կրթության դիպլոմ, տեղեկանք ատեստավորման մասին, վեց լուսանկար (3x4 սմ չափի):

Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ սեպտեմբերի 2-ը. քննությունները կանցկացվեն սեպտեմբերի 3-ից 10-ը: Համալսարանի հասցեն Ալեք Մանուկյան (նախկին Մասլյակ) 13: Հեռախոսներ՝ 55-67-90, 55-46-80:

ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ



## «ՍԱՆՏՈՒՐՍ» ֆիրման առաջարկում է

### 14 ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՕՐ ԿԻՊՐՈՍՈՒՄ

Բուլղարական «ՍԱՆՏՈՒՐՍ» ֆիրման յուրաքանչյուր երկու շաբաթը մեկ կազմակերպում է ուղիղ թռիչք

**ԵՐԵՎԱՆ - ԼԱՌՆԱԿԱ** (Կիպրոս):

*Զբոսաշրջիկների խմբերն արդեն հանգստանում են արեւաշող Կիպրոս կղզում*

*Առաջիկա թռիչքները՝ օգոստոսի 24-ին, սեպտեմբերի 7-ին*

Բարձրակարգ հյուրանոց (ծովից 100մ հեռավորության վրա)
Երկրեղանոց համարներ (հեռախոս, հեռուստացույց, սառնարան, խոհանոց)
3-օրյա էքսկուրսիա (կանկացողների համար) ՊՈՐՏ - ՍԱՅԻԴ (Եգիպտոս) եւ ԵՐՈՒՍԱՂԵՄ կիսրական օվկիանոսային «Ատլանտե» ջերմանավով:
Ուղեգրի արժեքը $540 + 96.000 դր.

*Ֆիրման առաջարկում է նաեւ 2-շաբաթյա հանգիստ Բուլղարիայի «Զոլոտիե Պեսկի» ծովափում եւ մասնավոր վիլլաներ Նեսեբր առողջարանում:*

Վճարումը համարժեք դրամով, կանխիկ կամ փոխանցումով

«ԱՆԻ» հյուրանոց, 512, 523, 530 սենյակ
Հեռ. 52-42-65, 59-45-12



## ԱՐՄԻՆՏԵՐՏՈՒՐ

ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ՖԻՐՄԱՆ

*Առաջարկում է*

ամառային հանգիստ լավագույն ծովափնյա հանգստավայրերում

**«Զոլոտիե պեսկի» (Բուլղարիա)**
Ծովափնյա հյուրանոց: Ուղեգրերը՝ 7, 14 եւ 21 օրով:
ԵՐԵՎԱՆ-ԲՈՒՐԳԱՍ-ԵՐԵՎԱՆ չվերթը ամեն ուրբաթ

**Լիմասոլ (Կիպրոս)** (օգոստոսի 25-ից, 14 օր)
3-4**** հյուրանոցներ ծովից 30-40մ հեռավորության վրա, 3-օրյա ճանապարհորդություն դեպի Եգիպտոս եւ Իսրայել
Ուղիղ չվերթ ԵՐԵՎԱՆ-ԼԱՌՆԱԿԱ-ԵՐԵՎԱՆ
ՇՏԱՊԵՔ ՍԻԱՆԱԼ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԳՍՏԱՑՈՂՆԵՐԻՆ
690$ միայն դրամով

Հասցեն՝ Երեւան, Հ.Հակոբյան փ., 2
Հեռ. 272-008, 272-007, 272-450


## Հայախոսության շարժման բարեկամներին

Օգոստոսի 25-ին ժամը 11-ին եղ. Շարենցի անվան դպրոցի դահլիճում տեղի կունենա հայախոսության շարժման նախաձեռնող խմբի երկրորդ հավաքը: Բոլոր շահագրգռված անձանց եւ կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը ցանկալի է:

**Լեզվի պետական տեսչություն «Մաշտոց» միավորում**


## ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

**Աջափնյակում (Հանրապետական հիվանդանոցի մոտ), 4 հարկանի խրուշչովյան տեսակի 5-սենյականոց բնակարան (95 քմ), վերնահարկով (45 քմ): Ընդհանուր մակերեսը 140 քմ: Հեռ. 58-18-41, 34-25-86:**



## Լույս է տեսել ՍՓՅՈՒՌ ՏԵՂԵԿԱՏՈՒ

կողմից հրատարակվող ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՍԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՊԱՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳՐՔԻ 1995 թ. № 2 թողարկումը

Տեղեկագիրը կարելի է ձեռք բերել թերթի կրպակներից կամ «ՍՓՅՈՒՌ» տեղեկատուից:

Փավստոս Բուզանդի 1/3, ☎ 58 91 67, 58 13 51



## Երեւանի իրավագիտության եւ մենեջմենթի «ԳԱԼԻՔ»

ինստիտուտը հայտարարում է 1995/1996 ուսումնական տարվա ընդունելություն

Ինստիտուտը պատրաստում է ժամանակակից պահանջներին բավարարող իրավագիտության, մենեջմենթի եւ ժուռնալիստիկայի բարձրակարգ մասնագետներ

**■ Իրավագիտության ֆակուլտետ**

Կադրեր է պատրաստում հետեւյալ մասնագիտացումներով
ա/ պետականագիտություն-որակավորումը՝ իրավաբան պետականագետ
բ/ իրեագիտություն-որակավորումը՝ իրավաբան իրեագետ
գ/ միջազգային հարաբերություններ-որակավորումը՝ իրավաբան միջազգայնագետ
դ/ միջազգայնագիտություն-որակավորումը՝ իրավաբան միջազգայնագետ
ե/ դատական փորձագիտություն-որակավորումը՝ իրավաբան-փորձագետ

**■ Կառավարման (մենեջմենթի) ֆակուլտետ**

Կադրեր է պատրաստում հետեւյալ մասնագիտություններով
ա/ արդյունաբերական արտադրության կառավարում-որակավորումը՝ տնտեսագետ մենեջեր
բ/ մարկետինգ/տուկայագիտություն/-որակավորումը՝ տնտեսագետ բիզնեսմեն
գ/ միջազգային տնտեսական հարաբերություններ-որակավորումը՝ տնտեսագետ միջազգայնագետ
դ/ ֆինանսներ եւ վարկ-որակավորումը՝ տնտեսագետ-ֆինանսիստ
ե/ բնօգտագործման էկոնոմիկա-որակավորումը՝ բնօգտագործման տնտեսագետ
զ/ հաշվապահական հաշվառում եւ տնտեսական գործունեության վերլուծություն-որակավորումը՝ տնտեսագետ-հաշվապահ
է/ կառավարման եւ ինֆորմատիկայի մշակման ավտոմատացված համակարգեր-որակավորումը՝ տնտեսագետ-ինֆորմատիկ

**■ Ժուռնալիստիկայի ֆակուլտետ**

Կադրեր է պատրաստում հետեւյալ մասնագիտացումներով
ա/ միջազգային ժուռնալիստիկա-որակավորումը՝ ժուռնալիստ միջազգայնագետ
բ/ լրագրություն-որակավորումը՝ լրագրող
գ/ հեռուստառադիոժուռնալիստիկա-որակավորումը՝ հեռուստառադիոժուռնալիստ:

Ուսման տեւողությունը բոլոր ֆակուլտետներում 5 տարի է: Ուսուցումը վճարովի է, մեկ տարվա ուսման վարձը 250 ամերիկյան դոլլարին համարժեք դրամ: Դրամական կուրսի էական փոփոխման դեպքում ինստիտուտն իրեն իրավունք է վերապահում փոխել ուսման վարձի չափը:

Ինստիտուտը հնարավորություն է ստեղծում ուսուցումը համատեղել աշխատանքի հետ:

Ինստիտուտ կարող են ընդունվել միջնակարգ, միջնակարգ մասնագիտական, բարձրագույն կրթություն ունեցողները:

Ընդունելությունը կատարվում է մրցութային եղանակով: Միջնակարգ դպրոցը մեդալով, միջնակարգ մասնագիտական հաստատությունները գերազանց ավարտածները ընդունվում են հարցազրույցով:

Ինստիտուտն արտոնագրված է ՀՀ բարձրագույն կրթության նախարարության կողմից:

Փաստաթղթերի ձեւակերպման եւ մրցութային քննություններին մասնակցելու համար դիմորդը վճարում է 2500 դրամ, որն անկախ արդյունքից չի վերադարձվում:

Ընդունելության քննությունները իրավագիտության եւ ժուռնալիստիկայի ֆակուլտետներում՝ հայոց լեզու (թելադրություն), հայոց պատմություն (բանավոր), օտար լեզու (բանավոր): Մենեջմենթի ֆակուլտետում՝ մաթեմատիկա (բանավոր), հայոց լեզու (թելադրություն), օտար լեզու (բանավոր):

Ինստիտուտ դիմողները պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝ դիմում, միջնակարգ կրթության վկայական (բնագիր), միջնակարգ-մասնագիտական կամ բարձրագույն կրթության դիպլոմ (պատճենը), բժշկական տեղեկանք (ձեւ թիվ 086), անձնագիր, 6 լուսանկար (3x4 սմ չափի):

Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ 1995 թ. սեպտեմբերի 5-ը: Ընդունելության քննությունները սեպտեմբերի 6-11-ը:

Մրցույթով անցած դիմորդները որպես առաջին կուրսի ուսանողներ կհրամանագրվեն մինչեւ 1995 թ. սեպտեմբերի 25-ը՝ ուսման վարձը մուծելուց հետո:

Ինստիտուտը հաջողությամբ ավարտած շրջանավարտներին տրվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի սերտիֆիկատ՝ աշխարհի 36 պետություններում, այդ թվում Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Անգլիայում, Գերմանիայում, Իտալիայում, Ֆրանսիայում դիպլոմը պատշաճորեն ճանաչելու մասին:

*Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ինստիտուտի ընդունող հանձնաժողովին Երեւան, Երվանդ Քոչարի 12/1 հեռ. «Ցուռաբար Անդրանիկ»-ում, Դավթի անվան թիվ 14 միջն. դպրոց: Հեռախոսներ՝ 55-58-78, 57-32-69*

Ուսումնական պատրաստվածությունը հս. Արովյանի անվան մանկավարժական ինստիտուտում:

ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ



## ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ

**ՉՎԱՑՈՒՑԱԿ**
1995 թվականի հուլիսի 15-ից սկսյալ
**ՉՎԱՐԹՆՈՑ**

| Օրերը | Օդանավ | Մեկնում | ժամանում | Չվերթ | Նպատակակետը | Չվերթ | Մեկնում | ժամանում |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1-----7 | ՅՈՒ-134 | 07.20 | 09.20 | R3 341 | ԱԹԵՆՔ | R3342 | 10.20 | 15.45 |
| ----5-- | ՅՈՒ-134 | 11.00 | 13.00 | R3 343 | ԱԹԵՆՔ | R3 344 | 13.55 | 17.55 |
| -2---6- | ՅՈՒ-154 | 05.15 | 08.00 | R3 151 | ԱԱՍՏԵՐԴԱՄ | R3 152 | 16.45 | 23.15 |
| 1--5-- | ՅՈՒ-134 | 08.20 | 11.25 | R3 7117 | ԱՇԳԱԲԱԴ | R3 7118 | 12.25 | 13.45 |
| -2----- | ՅՈՒ-134 | 10.55 | 12.00 | R3 345 | ԲԵՅՐՈՒԹ | R3 346 | 14.00 | 16.55 |
| ----5-- | ՅՈՒ-154 | 08.40 | 10.00 | R3 401 | ԲՈՒԲԳԱՍ | R3 402 | 12.00 | 15.20 |
| -2--5-- | ՅՈՒ-154 | 10.00 | 13.10 | R3 311 | ԴՈՒԲԱՅ | R3 312 | 20.00 | 23,10 |
| -2-----7 | ՅՈՒ-154 | 14.10 | 19.30 | R3 7095 | ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳ | R3 7096 | 21.30 | 23.05 |
| ------7 | ՅՈՒ-134 | 08.00 | 10.15 | R3 301 | ԹԵՀՐԱՆ | R3 302 | 11.45 | 13:41 |
| -----6- | ՅՈՒ-134 | 18.50 | 20.15 | R3 815 | ԽԱՐԿՈՎ | R3 816 | 22.15 | 01.20* |
| 1234567 | ՅՈՒ-154 | 13.55 | 15.05 | R3 7145 | ՄԻՆՎՈԴԻ | R3 7146 | 17.05 | 18.15 |
| -----7 | ՅՈՒ-154 | 12.10 | 14.15 | R3 7225 | ՄԻՆՍԿ | R3 7226 | 16.15 | 20.25 |
| 1234567 | ՅՈՒ-154 | 07.40 | 10.25 | R3 910 | ՄՈՍԿՎԱ | R3 909 | 12.05 | 14.30 |
| -2--567 | ՅՈՒ-154 | 14.55 | 17.40 | R3 894 | ՄՈՍԿՎԱ | R3 893 | 19.25 | 21.50 |
| --3--6- | ՅՈՒ-154 | 10.20 | 19.45 | R3 7091 | ՆՈՎՈՍԻԲԻՐՍԿ | R3 7092 | 22.45 | 02.55* |
| -2-4-6- | ՅՈՒ-134 | 10.50 | 12.35 | R3 7207 | ՌՈՍՏՈՎ | R3 7208 | 16.00 | 16.45 |
| 1------ | ՅՈՒ-134 | 07.20 | 11.00 | R3 341 | ՍԱԼՈՆԻԿ | R3 342 | 11.55 | 15.45 |
| -----6- | ՅՈՒ-134 | 12.40 | 14.40 | R3 835 | ՍԻՄՖԵՐՈՊՈԼ | R3 836 | 16.15 | 18.10 |
| 1234567 | ՅՈՒ-134 | 07.30 | 08.45 | R3 7167 | ՍՈՉԻ | R3 7168 | 10.45 | 12.00 |
| 1------ | ՅՈՒ-134 | 13.30 | 15.40 | R3 405 | ՍՕՖԻԱ | R3 406 | 17.40 | 21,30 |
| ---4--- | ԻԼ-86 | 07.15 | 10.00 | R3 101 | ՓԱՐԻԶ | R3 102 | 19.00 | 01.30* |
| 1------ | ՅՈՒ-134 | 18.20 | 20.00 | R3 825 | ՕԴԵՍԱ | R3 826 | 21.30 | 00.50* |

* ժամանումը/մեկնումը հաջորդ օրը:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք «ՉՎԱՐԹՆՈՑ» օդանավակայան կամ ՀԱՈՒ-ի գործակալներին


«Գարբերական» հրատարակչության տպարան, Երեւան 23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասիլ 69149. Պատվեր 1925 Տպաքանակը՝ 7000 Ստորագրված է տպագրության՝ 21.08.1995 Գինը՝ 50 դրամ

digitised by A.R.A.R.@